ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱՌ-ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՇԱԿԵՐՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՆՈՒՇ ԵԴՈՅԱՆ,

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,

Էլ. հասցե՝ *anush.yedoyan@mail.ru*

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ,

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան,

Էլ. հասցե՝ *hasmik.xachatryan.79@mail.ru*

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Վանաձորի թիվ 19 հիմնական դպրոց,

Էլ. հասցե՝ *harutyunyan_narine@yahoo.com*

DOI: 10.24234/scientific.v1i43.6

ԱՄՓՈՓՈՒՄ

Բառ-տերմինների յուրացումը և տեղին օգտագործումն արդիական խնդիր է հանրակրթության ոլորտում, քանի որ դրանք ապահովում են լեզվական մշակույթի ձևավորումը, ինչպես նաև միջառարկայական կապերի հաստատումը, գիտակարգերի ուսումնասիրումը, նպաստում աշխարհաճանաչողությանը, հարստացնում մարդու բառապաշարն ու հնարավորություն ընձեռում զարգացնելու խոսքն ու մտածողությունը, հետևաբար դպրոցական առարկաները աշակերտների բառապաշարի հարստացման մեծ աղբյուր են, որոնք բացի բուն բովանդակությունից, ապահովում են լեզվամտածողության բաղադրիչների ակտիվացմանը, որը հնարավորություն է ընձեռում ձևավորելու նոր բառապաշար, իմաստավորում է դրանք և նպաստում դպրոցականների ընդհանուր հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Հիշյալ գործընթացում աշակերտներին հնարավորություն ենք տալիս բազմակողմանիորեն ճանաչելու աշխարհը, երևույթներն ու հասկացությունները, որոնք ձևավորում են լայն մտահորիզոն և ապահովում բազմակողմանի կրթություն՝ հետագայում

հասարակության մեջ լիարժեք դրսևորվելու համար: Գիտության տարբեր բնագավառների տերմինների ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ հնարավոր է ձևավորել տերմինաբանական մի պաշար, որպեսզի սովորողը կարողանա պարզ ու անկաշկանդ խոսել, գրել, լսել, կարդալ, ազատ հաղորդակցվել շրջապատի հետ: Վերջինիս նպատակով կատարված վերլուծությունները, առաջարկություններն ու մոտեցումները պայմանավորում են հոդվածի նորույթը:

Բանալի բառեր՝ բառ-տերմին, բառապաշար, ձևավորվող տերմինաբանական համակարգ, միջառարկայական կապ, համալիր մոտեցում, տերմինների իմաստաբանություն, ընդհանուր բառատետր, աշխարհաճանաչողություն, մասնագիտական բառեր, խոսքի զարգացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարբեր բնագավառների արագընթաց զարգացմանը զուգահեռ հարստանում է նաև լեզվի բառային կազմը: Է. Աղայանի բնորոշմամբ. <<Կյանքում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն իր արտացոլումն է գտնում լեզվի բառային կազմի մեջ. Նոր հասկացությունների առաջացումը, կենցաղի մեջ ստեղծված նոր երևույթները և այլն իրենց բառային անվանումներն են ստանում և, դրանով իսկ գրանցվում լեզվի մեջ, նրա բառային կազմի մեջ>> (Աղայան Է., 1987): Ժամանակակից դպրոցը հեռու չի մնում այդ արագընթաց զարգացումից: Բայց, մեր կարծիքով, բառերն ուսուցանելիս պետք է զգույշ լինել և հաշվի առնել, որ ուսումնական գործընթացը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, որն արդյունավետ կազմակերպելու համար պետք է ի նկատի ունենալ, որ «սովորողներին ներկայացվող չափորոշչային պարտադիր պահանջները տրվում են ըստ հանրակարթական դպրոցի 3 փուլերի՝ տարրական, միջին և ավագ՝ յուրաքանչյուրի համար 3-ական մակարդակով, որոնք արտացոլում են աշակերտների կողմից գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման տարբեր աստիճանները: Յուրաքանչյուր հաջորդ մակարդակ հենվում է նախորդի վրա և ներառում է նրանում նախանշված գիտելիքներն ու կարողությունները:

Սովորողի բառապաշարի հարստացման և կատարելագործման աղբյուր կարող է հանդիսանալ նաև ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում

ձևավորվող տերմինաբանական համակարգը: Հայոց լեզվի դասերին, դեռևս միջին դպրոցական տարիքից սկսած, տերմինների համակողմանի ուսուցումը և սովորողների կողմից դրանց գործնական յուրացումը կարող են դառնալ անհրաժեշտ նախապայման տարբեր ուսումնական առարկաների միջոցով համապատասխան գիտությունների նկատմամբ աշակերտի հետաքրքրության, երեխայի անձի ձևավորման և առհասարակ նրա աշխարհընկալումը ընդլայնելու համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտության տարբեր բնագավառների տերմինների ուսուցման ամբողջական համակարգ ձևավորելով աշակերտների մեջ՝ արդյունքում կունենանք դպրոցական դասընթացների սահմաններում ձևավորող մի ամբողջ տերմինաբանական համակարգ, որն առավել քան բավարար է աշակերտների բառապաշարը հարուստ ու բազմազան համարելու համար:

Այդ նպատակով դասագործընթացում պետք է ներառել որոշակի համակարգված ու միասնական Մեթոդական համակարգ, որպեսզի ստանանք ցանկալի արդյունք: Դրա համար կարող ենք ստեղծել ընդհանուր բառահարթակ, որտեղ կգրանցվեն բոլոր միավորներն ու տերմիններն իրենց բացատրություններով: Յուրացրած բառերը պետք է ստուգել պարբերաբար որոշակի ժամանակահատված հետո, որոմք կարելի է կատարել խաչբառերի, ռեբուսների, հանելուկների միջոցով, այսինքն՝ տերմինների մեկնաբանությամբ աշակերտները կգտնեն համապատասխան միավորի անվանումը: Այս աշխատանքը կնպաստի ուշադրության, հիշողության զարգացմանը, գիտելիքի ամրապնդմանը, կզարգացնի բառապաշարը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայոց լեզվի դասերին (հատկապես ավագ դպրոցում) միջառարկայական կապեր հաստատելու միջոցով գիտական տերմինների խոր և համակողմանի յուրացման կարևոր նախադրյալներից մեկը ուսուցման գործնականության սկզբունքի ապահովումն է: Դասարանից դասարան ուսումնական գործընթացում հարստանում է աշակերտի բառապաշարը՝ դառնալով սովորողի խոսքի և մտածողության զարգացման անփոխարինելի միջոց, սակայն կարևոր է, որ

բառապաշարի ուսուցումը համապատասխանեցվի սովորողի տարիքին:

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի դասագիրք աշակերտների բառապաշարի հարստացման մի մեծ աղբյուր է, քանի որ տարբեր առարկաների դասավանդման ընթացքում տերմինների ուսուցումը դառնում է բառապաշարի հարստացման լավագույն միջոց, որի շնորհիվ էլ աշակերտը ծանոթանում է շրջակա աշխարհին և ընկալում այն իր ողջ բազմազանությամբ: Եթե մտովի պատկերացնենք, թե մեկ օրվա ընթացքում ուսուցանվող առարկաների դասագործընթացում քանի բառ է մտնում աշակերտի բառապաշար, ապա լիարժեք պարզ կլինի, թե որքան հարուստ կարող է լինել սովորողների բառապաշարը յուրաքանչյուր առարկայի ուսուցչի լիարժեք ու հետևողական աշխատանքի շնորհիվ: Դիցուք, բնագիտության, երաժշտության, կերպարվեստի, մաթեմատիկայի և այլ առարկաների դասագործընթացում դասագրքերում հանդիպող տերմիններին ծանոթացնելու պարագայում որքան հարուստ ու բազմազան բառապաշար կարելի է ձևավորել աշակերտների մեջ: Տերմինը «միանշանակ բառ է, որը ֆիքսում է գիտության, տեխնիկայի, արվեստի և այլ բնագավառների մի որոշակի հասկացություն: Տերմինը գիտության լեզվի տարրն է, որի ներմուծումը պայմանավորված է գիտության տվյալների .... ճշգրիտ ու լիարժեք նշանակման անհրաժեշտությամբ» (Ռոզենտալ Մ., 1975) :

Աշակերտների բառապաշարի մեջ ընդգրկված է հիմնականում երկու խմբի բառանյութ.

1. ընդհանուր հաղորդակցման բառեր, որոնք կիրառվում են առօրյա կյանքում, հարազատների, ընկերների հետ հաղորդակցության ժամանակ,
2. դպրոցում և այլ գիտական հաստատություններում կիրառվող բառապաշար, որը հիմնականում կիրառվում է ուսուցման ընթացքում, դասագրքերում հանդիպող բառերի և տերմինների հասկացման ու յուրացման գործընթացում:

Յուրաքանչյուր առարկայի ուսուցման ընթացքում բացատրելով սովորած տերմինների իմաստաբանությունն ու առանձնահատկությունները, վերլուծելով ու մեկնաբանելով դրանք՝ աշակերտներին հնարավորություն ենք տալիս բազմակողմանիորեն ճանաչելու աշխարհը, երևույթներն ու հասկացությունները, նրանց մեջ ձևավորում լայն մտահորիզոն: Բազմակողմանի կրթությունը ապահովում

է հետագայում սովորածը կյանքում կիրառելու ու հասարակության մեջ ինքնադրսևորվելու համար:

Տերմինների յուրացումն ստուգելու համար առաջարկում ենք հետևյալ վարժությունների համակարգը.

1. Կարելի է կազմել աղյուսակ՝ առաջարկելով լրացնել այն համապատասխան եզրույթներով.

Աղյուսակ 1. Բառափնջեր՝ ըստ առարկաների

Հայոցլեզու, գրականություն	Մաթեմատիկա	Պատմություն	Աշխարհ.	Ֆիզիկա	Քիմիա	Կենսաբ.
Դարձվածք բառակապակցություն մակդիր փոխաբերություն գազել	Բազմապատկում քառակուսի արմատ	բդեշխ մելիքություն աշտեգեղարդ	Ռելիեֆ հասարակած զենիթ	ուժ ծանրություն ծավալ	ռեակցիա օքսիդացում այրում	Ֆլորա Ֆաունա

2. Կարելի է խմբային աշխատանք կազմակերպել. Խմբի ավագները թղթի վրա նախօրոք գրված բառեր են հանում արկղիկներից, քննարկում խմբի հետ, ապա ներկայացնում են եզրույթները տվյալբնագավառից՝ բացատրելով ու մեկնաբանելով դրանք:

3. Կարելի է զուգահեռ դասարանի հետ անցկացնել մրցույթ՝ «Տերմինների աշխարհում» խորագրով: Ամենաշատ տերմիններ մեկնաբանող խումբը կլինի հաղթող (բնականաբար գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել նաև տրամաբանված, գեղեցիկ խոսքը):

4. Կարելի է նաև կազմակերպել բառաշղթա-բառախաղ տարբեր մասնագիտությունների վերաբերյալ. մեկնարկային բառի վերջին տառով աշակերտն ասում է նոր տերմին (բնագավառն ընտրում ենք նախապես):

5. Միջառարկայական կապի շրջանակներում որևէ առարկայի ժամանակ կարելի է կազմակերպել ամփոփիչ ստուգողական բաց դաս (կարելի է նաև

զուգահեռ դասարանի հետ համատեղ), որի ընթացքում աշակերտները ճիշտ և տրամաբանված խոսքով, փաստերով և իրենց եզրահանգումներով կներկայացնեն համապատասխան թեման: Օրինակ՝ պատմություն առարկայի դեպքում կարող են ներկայացնել որևէ արքայի կառավարման ժամանակաշրջանը, նրա դիվանագիտական քայլերը, դրանց առավելություններն ու թերությունները, կատարել վերլուծություն, ներկայացնել իրենց մոտեցումն այդ հարցի վերաբերյալ, կարող են ներկայացնել նաև միջավայրը, մշակույթը, կենցաղն ու կեցությունը: Աշխատանքը կարելի է հանձնարարել նախագծման մեթոդով՝ յուրաքանչյուր աշակերտի հանձնարարելով աշխատանքի համապատասխան բաժնի ուսումնասիրումն ու ներկայացումը: Կարելի է տերմինների ուսուցման ժամանակ կիրառել նաև զննական միջոցներ լիարժեք պատկերացում կազմելու նպատակով: Վերոնշյալ և նմանատիպ առաջադրանքների միջոցով հնարավոր է խթանել աշակերտների հետաքրքրությունը տերմինների յուրացման հարցում: Կարևոր է միայն դասավանդող ուսուցիչների հետևողական աշխատանքը, որովհետև բառապաշարի հարստացումը պետք է լինի պարբերաբար՝ յուրաքանչյուր դասին սովորեցնելով նոր բառ ու տերմին: Դասագործընթացի ժամանակ պարտադիր պետք է ժամանակ հատկացվի բառային աշխատանքին: Տերմինային բառանյութի ներմուծումը համակողմանիորեն բարդ և համակարգված գործընթաց է, որը ներառում է մի շարք գործառույթներ՝ պայմանավորված ներմուծվող բառի ինչպես կառուցվածքաիմաստային առանձնահատկություններով, այնպես էլ սովորողի անհատական լեզվազգացողությամբ, նաև մտավոր և հոգեբանական առանձնահատկություններով, որոնք պետք է հաշվի առնվեն ուսուցման գործընթաց կազմակերպելիս: Բառ-տերմիններով հարստացնելով աշակերտների բառապաշարը՝ ուսուցիչները հիմք են նախապատրաստում նաև աշակերտների մասնագիտական կողմնորոշման համար: Այս ուղղությամբ տարվող աշխատանքը բավականին բարդ և համակողմանի մոտեցում պահանջող գործընթաց է, որն իրականացվում է աստիճանաբար. նախ՝ աշակերտներին ծանոթացնում են բառ-տերմինին, բացատրում և մեկնաբանում, ստուգում, թե որքանով են նրանք յուրացրել բառիմաստը, ապա՝ ամրապնդում այն համապատասխան վարժություններով: Բառապաշարի հիմնական հարստացումն իրականացնում ենք

մայրենի լեզվի ուսուցման ընթացքում, հատկապես բառագիտությանը նվիրված բաժնում: Այն հիմնական դպրոցում ուսումնասիրում ենք 6-րդ դասարանում՝ գրական տեքստերին զուգահեռ տալով գիտելիքներ բառագիտությունից: Գրական նյութերին հաջորդում են բառային և տեքստային առաջադրանքներ, որոնք ամրապնդում են աշակերտների լեզվական գիտելիքները: «Բառ» թեման հաջորդում է «Ես և իմ ընտանիքը» խորագրով ենթաբաժնում զետեղված Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վիպակից վերցված հատվածին (Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., 2016): Առաջին դասաժամից հետո (հաջորդ դասը վերհուշի շարունակությունն է) ուսուցիչը սովորողին հանձնարարում է տանը ճշտել, թե որն է իր արտասանած առաջին բառը: Այդ առաջադրանքը կատարելով՝ սովորողը պատրաստվում է «Բառ» թեմայի ուսումնասիրությանը: Թեման անցնելիս ուսուցիչը գրատախտակին գրում է Վ. Դավթյանի բանաստեղծությունից մի հատված.

Բառեր՝ ցողի պես ցոլուն, բառեր՝ նման կայծքարի,
Բառեր, որոնց խորքերից դեռ հրաշքն է շողշողում...

Այնուհետև ուսուցիչը նշում է, որ ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը սիրում էր ասել, որ բառը մի ամբողջ աշխարհ է, ապա ավելացնում, որ բառերը մարդու ուղեկիցն են նրա ողջ կյանքի ընթացքում: Մարդն ուղղակի պետք է այնպես սովորի, որ բառերի ներկապնակից կարողանա ճիշտ օգտվել,կարողանա հոմանշային բառերի իմաստային նրբերանգները հասկանալ, ոճական կիրառությունները տարբերակել, խոսքը գեղեցկացնել և հարստացնել մեր ոսկեղենիկ հայերենով:

6-րդ դասարանում հայերենի բառապաշարը ուսումնասիրելով՝ աշակերտը գծապատկերով կարող է համակարգել իր սովորածը.

Հայերենի բառապաշար

Հիմնական — գրքային — խոսակցական

ուտել, գրել, պարել, հայր, մայր,	Պատմական	Գիտական	գեղարվեստական	Իրիկուն, քեֆ, թուշ, խելառ,

տունգեղեցիկ, ծեր, սպիտակ, ես, դու, որտե՞ղ, արագ, շուտ, ուշ, երևի, մոտ, վրա	աշտե, նիզակ, ծիրանի, բդեշխ	կենսոլորտ, դելտա, ֆոտոսինթեզ	հեզաճկուն, տխուրաչյա, վեմ	մարդուտալ,ախպեր, էնքան

Գծապատկեր 1. Հայերենիբառապաշար

Գրքային բառապաշարն անցնելիս ուսուցիչը սովորողների ուշադրությունը սևեռում է տարբեր գիտական գրքերում, նաև դասագրքերում օգտագործվող բառերի վրա, որոնք մասնագիտական բառեր են, և ամեն մեկը գործածվում է մասնագիտական գործունեության տվյալ ոլորտում աշխատող մասնագետների կողմից: Այսպես՝ իրենց բառապաշարն ունեն տնտեսագետները, արվեստաբանները, բժիշկները, իրավաբանները և այլն: Կարճ բացատրությունից հետո ուսուցիչն աշակերտների միջոցով տալիս է մասնագիտական բառերի սահմանումը և նշում, թե ինչ են կոչվում այդպիսի բառերը: Այն մասնագիտական բառերը, որոնք ճշգրիտ սահմանված հասկացություններ են արտահայտում, կոչվում են տերմիններ (եզրույթներ: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է աշակերտներին լրացնելու աղյուսակը (Փոխներգործուն գրառումների համակարգ).

+ (գիտեի)	-(չգիտեի)	? (չհասկացա)

Աղյուսակ 2

Աշխատանքն ավարտելուց հետո հատուկ ուշադրություն ենք դարձնում և քննարկում այն հատվածները, որոնք աշակերտները չեն հասկացել, ապա ամբողջ դասարանով փորձում են մեկնաբանել և հասկանալ տեսական նյութի անհասկանալի պահերը: Սովորածն ամփոփելուց հետո անցնում են գործնական առաջադրանքների կատարմանը, որոնք կարող են լինել բազմազան ու բազմաբնույթ: Առաջադրանքները կարելի է հանձնարարել թե՛ խմբերին, թե՛ անհատներին:

1. Առանձին աշակերտներին հանձնարավում է գրել եզրույթներ տարբեր ոլորտներից.

1-ին աշակերտ՝ մաթեմատիկա

2-րդ աշակերտ՝ կերպարվեստ

3-րդ աշակերտ՝ լեզվաբանություն

4-րդ աշակերտ՝ երաժշտություն

5-րդ աշակերտ՝ հայոցեկեղեցուպատմություն …

2. Հետևյալ բառերից առանձնացնե՛լ գիտական տերմինները.

   գիտափորձ, կարգապահականտույժ, կոտորակ, հնչյունաբանություն, բազմազան, շուշանաթույր, ներարկիչ, մարդ, դպրոց…

3. Հետևյալ եզրույթները խմբավորե՛լ ըստ ոլորտների.

   գեղանկար, նախադասություն, քրեածին, համարիչ, ախտորոշում, շնչեղ խուլ, կայսերապաշտություն, խորանարդ, նյարդաթել, ցեղասպանություն, եռանկյունի, վրձնահարված, կոչական, քանդակագործ, բանաստեղծություն, մեղադրյալ, գաղտնավանկ…

   Կարելի է հանձնարարել նաև հետևյալ առաջադրանքները.

4. Թվարկե՛լ այն բառերն ու արտահայտությունները, որոնք բոլորովին վերջերս են սովորել՝

   ա) մայրենիի դասին.

   բ) այլ առարկաների դասերին՝ նշելով առարկայի անվանումը.

   գ) տարբեր գրքեր կարդալիս և արտադասարանային ընթերցանության ժամանակ:

5. «Բառքամոցի»՝ *հնչյունաբանություն* բառից կազմել եզրույթներ՝ նշելով ոլորտը (նյութ, հնչյուն, թույն, բու…):

Պետք է նշել, որ «Բառ» թեման խաղային առաջադրանքներ տալու, խաղային գործունեություն ծավալելու լայն հնարավորություններ է ընձեռում: Սովորողներին հետաքրքրելու և ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու միջոց են նաև լեզվական խաչբառերի, գլուխկոտրուկների լուծումները, մրցույթների կազմակերպումը և անցկացումը: Լավ կլինի, որ աշակերտներն իրենք փորձեն ստեղծել խաչբառեր, գլուխկոտրուկներ, վիկտորինայի հարցեր և այլն: Կարելի է տերմինների վերաբերյալ կազմակերպել նման խաղեր՝ 1) ամբողջացրու՛ նախադասությունը՝ տեղադրելով բաց թողնված եզրույթը, 2) արտահայտի՛ր մեկ

բառով՝ եզրույթով, 3) բացատրի՛ր եզրույթը, 3) գտիր բառակապակցությանը համապատասխանող եզրույթը (վերջին 3 խաղերը կարելի է կազմակերպել մրցույթի ձևով՝ տարբեր թերթիկները տալով 3 խմբի և հրահանգելով սկսել աշխատել: Կհաղթի այն թիմը, որը արագ ու ճիշտ պատասխաններ կգրի): Սովորողի բառապաշարի հարստացման աղբյուր կարող են լինել նաև շփումը մեծերի, հասակակիցների հետ, դպրոցը, արտադասարանական ընթերցանությունը, տարբեր անիմացիաները, մուլտերն ու ֆիլմերը, երաժշտությունը, համացանցը և այլ գործոններ, որոնց բազմազանությամբ էլ պայմանավորված է աշակերտների բառապաշարի հարստացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ հարուստ բառապաշարն է հնարավորություն տալիս մարդուն հեշտությամբ հաղորդակցվելու, քանի որ հարուստ տեղեկատվություն ունենալով՝ նա կարողանում է պարզ ու անկաշկանդ խոսել, գրել, լսել, կարդալ և այլն: Շատ կարևոր է, որ աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացում ապահովվի միջառարկայական կապը, ու երեխաները գիտակցեն ու հասկանան, թե ինչ հետաքրքիր ու զարմանահրաշ է բառերի աշխարհը, որը նրանց տանում է դեպի գիտելիքի աշխարհ, սովորողի դեմ բացում բազում ուղիներ, տանում դեպի տարբեր ոլորտներ, դեպի ճանաչություն և իմացություն, դեպի գաղտնիքների բացահայտում: Փաստենք նաև, որ աշակերտների սովորած նոր բառերը, տերմինները համակարգվում են և վերջնարդյունքը երևում է հայոց լեզվի ժամերին, քանի որ այդ առարկայի դասավանդումը հետապնդում է ոչ միայն գրագիտության, լեզվաքերականական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորում, այլև սովորողների բառապաշարի հարստացում:

Դպրոցում աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացում դասավանդվող բոլոր առարկաներն էլ ունեն լայն հնարավորություն՝ ապահովելու սովորողի հարուստ բառապաշարն ու կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Կարևոր է, որ ուսուցիչները բացահայտեն դրանք և հասցնեն աշակերտների գիտակցությանը: Սովորողների բառապաշարի հարստացման աշխատանքները կարելի է իրականացնել ոչ միայն ուսուցման ավանդական, այլև ժամանակակից մեթոդների գործադրման միջոցով: Այս աշխատանքը ճիշտ և

անխոչընդոտ իրականացնելու համար առաջարկում ենք՝

- ապահովել հանրակրթական պետական չափորոշչով նախատեսված առարկայական կրթական ծրագրով բառ-տերմինների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից ուսուցման տարրեր,
- բացահայտել, հետազոտել ուսումնառության ընթացքում նկատված սովորողների՝ բառապաշարի ընդարձակման հետ կապված կրթական կարիքները և գտնել համապատասխան լուծումներ,
- ապահովել դասագործընթացի ժամանակ սովորողների ակտիվ մասնակցությունը՝ հասնելով տարբեր ուսումնական առարկաներից սովորած բառ-տերմինների առավելագույն յուրացմանը,
- դասարանում ստեղծել ուսումնական գործընթացի կազմակերպման հարմարավետ միջավայր, հաղորդակցման ազատ մթնոլորտ՝ հաճախ նախապատվությունը տալով խաղային գործունեությանը,
- կիրառել ուսումնական իրավիճակին համապատասխան ուսուցման տարատեսակ մեթոդներ, հնարներ և միջոցներ՝ կրթական գործընթացի տարբերակված կազմակերպման, տարբեր ուսումնական առարկաներից յուրացվող տերմինները աշակերտին լիարժեք դասավանդելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղայան Է. (1987). *Լեզվաբանության հիմունքներ.* Երևան: ԵՊՀ.

Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա. (2016). *Մայրենի 6 դասագիրք.* Երևան: Էդիթ Պրինտ,

Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա. (2012). *Մայրենի 5–6 ուսուցչի ձեռնարկ.* Երևան: Էդիթ Պրինտ.

Ռոզենտալ Մ.Մ. (1975). *Փիլիսոփայական բառարան.* Երևան: Հայաստան հրատ.

REFERENCE LIST

Agayan E. (1987). Osnovy yazykoznaniya *(Bases of linguistics).* Erevan. EGU:

Gyurdzhinyan D., Aleksanyan T., Galstyan A. (2016). 6 uchebnikov rodnogo yazyka *(Textbook of the native language 6).* Erevan. Edit Print.

Gyurdzhinyan D., Aleksanyan T., Galstyan A. (2012). Posobie dlya uchitelya po rodnomu yazyku 5–6 *(Teacher's book for the narive language 5-6).* Erevan. Edit Print.

Rozental' M.M. (1975). Filosofskij slovar' *(Philosophical Dictionary).* Erevan. Gazeta Armeniya:

РЕЗЮМЕ

ВСЕСТОРОННЕЕ ИЗУЧЕНИЕ СЛОВ-ТЕРМИНОВ В ШКОЛЕ КАК СРЕДСТВО ОБОГАЩЕНИЯ СЛОВАРНОГО ЗАПАСА УЧАЩИХСЯ

АНУШ ЕДОЯН, АСМИК ХАЧАТРЯН, НАРИНЕ АРУТЮНЯН

Стремительное развитие науки, технологий, экономики, политики, культуры и других областей обязывает развивать и обогащать словарный запас человека новыми словами и терминами, включающими весь научно-технический прогресс, овладение которым становится необходимой предпосылкой для дальнейшего прогресса в различных науках. Обучение терминам обеспечивает изучение

дисциплин, способствует познанию мира, обогащает словарный запас и способствует развитию речи и мышления. В этом смысле учебник по каждому предмету, преподаваемому в школе, является отличным источником обогащения словарного запаса учащихся, поскольку он обогащается новыми словами и терминами во время изучения каждого предмета, благодаря чему учащийся знакомится с миром во всем его многообразии. Объясняя семантику и особенности терминов, изучаемых в рамках школьных предметов, интерпретируя и объясняя их, мы даем учащимся возможность всесторонне познакомиться с миром, явлениями и концепциями, которые создают широкий кругозор у учащихся. Курс родного языка средних классов, имеющий в основном практическую направленность, дает учителям армянского языка и литературы широкие возможности для постановки задач в области преподавания лексикологии, наблюдения и анализа на отдельных оригинальных материалах. Знакомя с терминами из разных областей науки, можно сформировать у студентов терминологическую систему, которой более чем достаточен, чтобы считать словарный запас студентов богатым и разнообразным. С этой целью анализ, предлагаемые рекомендации и подходы определяют новизну статьи.

Ключевые слова: слово-термин, лексика, формирующаяся терминологическая система, междисциплинарная связь, комплексный подход, семантика терминов, общий словарик, познание мира, профессиональные слова, развитие речи.

ABSTRACT

COMPREHENSIVE TEACHING OF WORD-TERMS IN SCHOOL AS A MEANS OF DEVELOPING STUDENTS' LEXICON

ANUSH EDOYAN, ASMIK KHACHATRYAN, NARINE HARUTYNYAN

Scientific, technological, economic, political, cultural and other spheres' dramatic improvements make us develop and enrich a person's lexicon with new words and terms. Teaching of terms provides the study of different scientific categories, contributes

outlook, enriches lexicon and develops thinking. From this, each disciplinary textbook is a huge source to expand students' lexicon with new words and terms. While teaching different discipline, giving explanation on the semantic and characteristic features of the terms, commenting on them, we provide an opportunity for students to recognize the world, phenomena which forms their outlook. The course of the native language of the middle classes, has a practical nature giving teachers of the Armenian language and literature opportunities for setting tasks in the field of teaching lexicology, observation and analysis original materials, and partly serves to teach word combinations by highlighting intra-subject, inter-subject and extra-subject connections with the goal of professional orientation of the student. Due to teaching terms in different scientific spheres, it becomes possible to form such a terminological system within students which is more than sufficient to consider the students' lexicon to be rich and varied. For that aim analysis, suggested recommendations and approaches determine the novelty of the article.

Key words: term, vocabulary, interdisciplinary connection, emerging terminological system, complex approach, semantics of terms, general vocabulary, world outlook, professional words, speech development

Հոդվածը ստացվել է՝ 06.04.2022 :
Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 05.05.2022:
Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 17.06.2022: